600.0222.06.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2018 թվականի №222Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի №84Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով «ՋՈՆ ԵՎ ՄԻԼԵՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի մայիսի 23-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 20-ի «ՋՈՆ ԵՎ ՄԻԼԵՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոխաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №84Ա որոշման 2-րդ կետով հաստատված №1156 թույլտվության պայմանների 3-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Շահումյան 2-րդ փողոց, տուն 3.».

   «4) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդինատները՝ 44E 27′ 58″, 40N 10′ 14″.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՋՈՆ ԵՎ ՄԻԼԵՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
6 հունիսի 2018թ.